

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԵՐ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանութիւնը բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսչութիւն. Կիրակիօրեայ գրոյց.
Մատենագրութիւն. Նամակ Աստուածային.
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրա-
նկար. — Հեռագրի մասին. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
թիւններ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Օ՛ր, երբ կը
բացվի արշալոյսը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻՆՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Արդիւնաբերական դար է մեր ժամանակը.
ամեն ինչ ծառայում է կապիտալին. Ուր կայ
խոշոր գործարարութիւն, այնտեղ կայ եւ ոսկու
բացարձակ, անսահման արբանյակութիւն. Եւ
այդ ոսկին պահանջում է զոհեր, արիւնքաթա-
թախ զոհեր: Նրանց թւի մասին մի մտածե-
ցէ՛ք. օձիք մի պատե՛ք, տեսնելով այդ զոհերի
տանջանքները: Ամեն ինչ բնական է արդիւ-
նաբերական մեծագործութիւնների շրջանում:
Մինչեւ որ տանեալ աշխատանքները չը ջար-
դեն իրանց ոսկորները, մինչեւ որ հարկաւ-
որ ընտանիքներ չանաղաղանան, հաստատ
հիմքերի վրա չի կանգնի մի շողմեքնայ,
իսկ գիտե՛ք՝ ինչ է նշանակում ամեն մի շող-
մեքնայ:

Այսպէս դառնում է գործնական խելքը, նա,
որ առնում-տալիս է, քանդում է, չինում է,
արդիւնաբերում: Իսկ մենք, գրքի մարդիկ,
չարունակում ենք նայել աշխարհին այնպէս,
ինչպէս պէտք է նայել մի տեղի, ուր մարդիկ,
այն էլ անպատճառ լաւ մարդիկ են ապրում:
Եւ չառն մի վրեժ ժամանակակից գործնա-
կան մտքերի հետ, տարիների ընթացքում:
Ինչ աշխատում էին հաւատացնել. թէ զոհերը
անխուսափելի են, թէ զեղիւն կուռքը առանց
տաք արիւն ձեռքու չէ կարող ապրել: Դա
բնական է, ասում էին ինչ: Բայց եւ չէի ու-
զում, որ բնական լինի մի այդպիսի մարդկա-

յին սպանդանոց: Ինչո՞ւ անպատճառ արիւն,
մարդկային արիւն. ինչո՞ւ ձեր շողմեք, ձեր մե-
քենան պիտի այդքան անգութ լինի զէպի մի
տեսակ մարդիկ, զէպի այն մարդիկ, որոնց
մենք ընդհանուր անունով լինե՛ք՝ ենք կոչում:
— Բնականաբար այդպէս պիտի լինի:

Անողորմ, միամտան պատասխան ամեն ժա-
մանակ: Եւ ուզում էի տեսնել այդ բնական
գործիւնը, եւ չը գիտէի, թէ այդ ինչ տեսակ
արիւնոտ բնութիւն է, որ հաստատվել է մեր
երկրի վրա:

Եւ ինչ ասում էին. «Բնական ձեր տեսածը
չէ: Այժմ նա այնքան հակապական հասակ է
առել, որ նրան չէք ճանաչի»:

Վերջապէս տեսայ այսօրվայ Բագուն: Եւ
ճիշդ է միանգամայն: Նա վիթխարի կերպա-
բանափոխութեան է ենթարկվել:

Տեսել էի նաւթային մայրաքաղաքը եօթն-
ամսական թուականներին. այն ժամանակ դա
փոքրիկ, ցածր, միայնակ անկողնի մի քա-
ղաք էր, արտադրում էր նաւթ համեստ չա-
փերով: Բայց, փոքրիկ տակաւների մէջ ուղարկում
էր զանազան կողմեր եւ տառնում էր փոքրիկ
եկամուտներ: Հարուստներ քիչ չը կային, բայց
հարստութեան չափերն էլ համեստ էին:

Երկրորդ անգամ տեսայ Բագուն իննսունա-
կան թուականների սկզբին: Վիթխարի «Ֆան-
տաններ» ժամանակն էր դա: Երկաթուղին
կապում էր Բագուն Սեւ ծովի հետ եւ Բագ-
ուն նաւթը պտոյտ էր դալիս երկրագնդի չորս
կողմը: Տները բարձրացել էին, մեծացել: Կա-
րտութեան չափը նոյնպէս բարձրացել էր.
արդէն միլիոնների ձայներ էին լսվում:

Բայց եկաւ երրորդ շրջանը: Անգլիական
միլիոնները մտան Բագուն, նաւթը թանգաւա,
սկսվեց չը տեսնված տեսք, եռացման ծայրա-
յեղ աստիճաններին հասաւ: «Զայեակալա»-ները,
պակեկալայի, աւազակային կողոպտում-
ների նպատակով հիմնված ակցիոնեական ըն-
կերութիւնների ժամանակն էր դա:

Եւ ահա այդ ժամանակի ստեղծած Բագուն

էր, որ եւ տեսայ մի քանի շաբաթ առաջ:
Ոստք չունեմ—արդիւնաբերութիւնը հրաշք-
ներ է ստեղծել, որոնց կատարածայնէին մար-
դիկ, եթէ այդ բոլորը կատարվէր այն հին,
միամիտ դարերում: Այժմ արդէն երկրորդ
շրջանում կատարված տեսքն էլ ոչինչ են երե-
ւում. այժմ բարձրացել են եւ բարձրանում են
անաղին պալատներ, որոնց մէջ տիրում է,
ինչ ասել կուզի, չեղելութիւն, զեղխութիւն:
Ամեն տեղ էլ լեզուական լոյս, մարդիկ չը գի-
տեն ինչպէս վատեն իրանց վիթխարի հա-
րստութիւնները եւ ինչ որ տալիս է մեռած,
անապատային բնութիւնը, ոտիւն, չէ բաւա-
կանայնում նրանց:

Տեսնե՛ք, ապրիլու, անյադութեամբ, կատա-
ղաբար վայելելու տեսք: Նա ամեն տեղ է: Եւ
երբ երկուցնան նայում էք էլեքտրական լոյսե-
րը—այն անհուն տարածութեան, որ երեւում
է Բագուն արեւելեան կողմում եւ կողմում է
Սեւ քաղաք, դուք տեսնում էք միայն ան-
հուն, անբերելի ոյժ, որ, գիշերները պլպլա-
լով բերանաւ փայլուն աչքերի մէջ, իսկ ցե-
րեկը ծխի եւ մուխի մի անհրապոյր տեսարան
ներկայացնելով, ամեն ժամ, ամեն րոպէ, ու-
չինչ ճանգիւղ չը ճանաչելով, աշխատում է, որ
պատանների, միլիոնատերերի հաճոյքները կա-
տարվեն եւ ոչ մի բանի մէջ պակասութիւն
չը լինի:

Մի երեկոյ եւ անցնում էի փառահեղ մա-
զազիւնների առջեւ: Անց ու դարձ անդին
թիւ ու համար չունէին: Էլեքտրական պայ-
ծառ լուսաւորութեան մէջ շարժվող այդ բազ-
մութիւնը թուում էր ինչ երջանիկ, զոհ մարդ-
կանց մի զրկում, որ երջանիկութիւնը հանգ-
ստութեան, դադարի, անգործութեան մէջ չէ,
այլ անդադար շարժման, տենդային իրարանց-
ման մէջ:

Յանկարծ եւ տեսայ մի թշուառ կին: Յըն-
ցողների մի շարժում կոյտ էր դա, որ անց-
նում էր այդ խոր, զանազանակերպ բազմու-
թեան միջով: Էլեքտրական մեծ լամպան մի

վայրկեան լուսաւորեց այդ զոհալի գոյութիւ-
նը. մի վայրկեան եւ տեսայ նրա մերկ թեւե-
րը, որոնց չէր կարողանում ծածկել հին,
կարկատաններով ծածկված շարժ:

Եւ կանգ առայ: Անկարելի էր կանգ չառնել:
Անակնաւ, սիրտ ծակող հակադրութիւն էր
դա: Գնում էր իր ճանապարհով, անտարբեր
զէպի իր չընկալաւոր, գնում էր աբազ քայլե-
րով, ով գիտէ ուր, չտալով չէ, որովհետեւ
մութ էր արդէն եւ, երեւի, երկնայինը սպա-
սում էին նրան՝ այս պալատների քաղաքի մի
անկիւնում, մի որ եւ է շանարոյնի մէջ:

Նայում էի խելք հնոյ ետեւից: Դա էլ զոհ
էր. դա էր այն սարսափելի իրականութիւնը,
որի մասին գործնական խելքի տէր մարդիկ
այնքան հեղինակօրէն, այնքան համոզված կեր-
պով ասում են. «Անխուսափելի է, բնական է»:

Ահա թէ ինչն է եղել արդիւնաբերութեան
բնութիւնը: Եւ սա մի խոր հառաչանք հանեց
իմ սրտից: Որքան էլ պատուոված լինէին կը-
նոյ շորերը, բայց եւ ճանաչեցի, որ նա գեղջ-
կուհի է:

Հայկական գիւղն է այն զոհը, որ մատուց-
ված է այստեղ ոսկի աստուծուն:

Որքան անխիղճ, որքան հրէշաւոր է այս
բնութիւնը, որ օր ու գիշեր այդպիսի զոհով է
միայն կշռանում:

Բայց իմ գրոյցը երկարացաւ, իսկ այդ զոհի
ցաւերը, ինչպէս ասում են, «եօթն օր եօթը
գիշեր» պէտք է պատմել: Թողնե՛ք միւս ան-
գամ, ընթերցող...

Լ.

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Գարբիէլ Սունդուկեանց. «Գիշերվան սարը խեղ է».
Կատակերգութիւն մէկ ակարատով. երկրորդ տապ-
գրութիւն. ուղղած. 36 էր. գ. 30 է. Թիֆլիս, 1901 թ.

Պ. Գարբիէլ Սունդուկեանց, ինչպէս յայտնի
է, Թիֆլիսի Օստրովկին է եւ միակ հայ թա-
տերագիրը, որի տաղանդն անվիճելի է:

Իր մէջքին եւ գնում է իր գիւղը: Յովակը չէ
լայիս... «արտասուք աւելորդ է եւ անօգուտ.
գործ էր հարկաւոր եղորը փրկելու համար»...
ձանապարհ երկար է... Յովակը ընկնում է,
բայց կրկին վեր է կենում... «Նրան ոյժ էր
տալիս այն յոյսը, թէ չուտով արշալոյսը կը
ծագի, խաւարը կը չքանայ, ընկերը կը փրկվի,
եւ նա գնում էր աչքերն անդադար արեւելքին
յառած»:

— «Օ՛ր, երբ կը բացվի արշալոյսը, մտածում
էր նա»:

Օ՛ր, երբ կը բացվի արշալոյսը...
Նրանց արշալոյսը...

Լավում է աքաղաղի գիւ ձայնը... Դա Մելի-
քենց աքաղաղն է... բայց լուս եւ դատարկ է
աքաղաղի շուրջը... Այսօր գիւղը չէ գարնան
կենսք չը կայ, կենսքը աղաւթի է: Մելիքենց
աքաղաղը կանչում է նորից: Ոչ ոք ոտքի չէ
եկնում: Քանի որ չէ գնում աղօթելու: Հովիւը
չէ քշում հօտը: Եկեղեցու զանգակները չեն
զօղանջում:

Ձայն չը կայ, լուս եւ գիւղը: Նա ընկել է, քը-
նել է այնպէս, որ այլ եւս զարթնելու չէ:

Արշալոյսի կիսախաւարի մէջ գայլի երկու
աչքերը փայլում են միայն, պաղ, սարսափելի
աչքեր...

Իսկ գիւղի համար այլ եւս արշալոյս չը կայ,
բոլորը մթին է...

Միթէ այս է լինելու նրանց արշալոյսը...

Պ. Ահարոնեանի նկարագրած թշուառու-
թիւնները մի ծանր ժառանգութիւն են թող-
նում մեզ: Պէտք է ճանաչենք մեր պարտքը,
մտածենք ամենքս եւ ամեն օր, ինչպէս բար-
ւոյն խելքերի վրեժով: Մենք, Յովակի նման
համոզվելով, որ արտասուքը աւելորդ է, ա-
նօգուտ, գործ է հարկաւոր, պէտք է աշխա-
տենք ապահովացնել զաղթականներին, պա-
տասարել մանաւանդ որբերին:

Գր. Զալուչեան

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Օ՛ր, երբ կը բացվի արշալոյսը

(Նուէր Գր. Զալուչեանի յիշատակին)

«Պայտէ՛, դուր կերթա՛, քուրդն էլ—
ման Բաշուն տարա՛. գողաց Թուման...»

«Թորգ, լաօ, թորգ, ասաց Ղարօն,
Բաշուն մեր չի, քրդուն ի, թորգ տանի,
քե մեռնիմ, մեր տուն լէ մերը չի, մեր
արտ լէ մերը չի, մեր արուն լէ մերը չի,
խալը բանըմ չունի, զըմմէն լէ քրդուն ի,
էնոր արունը թանգ ի»:

Ա. Ահարոնեան. «Պատկերներ» (եր. 307)

Մեր առաջ դրած է մեր տաղանդաւոր վիպա-
գրող Ա. Ահարոնեանի «Պատկերները», տ. Վառ-
վառէ Քանանեանի գեղեցիկ հրատարակութիւնը:
Պատկերներից շատերը մեզ ծանօթ են, բայց
տարբեր է տպագրութիւնը, երբ կարդում էք
բոլոր պատկերները մինը միւսի ետեւից ծայրէ
ի ծայր. կարծես պատկերներ չեն նկարած, այլ
ամփոփ պատմութիւն է մեր թիւրքահայատակ
եղբայրակիցների:

Այդ պատմութիւնը մի ողբ է:
Մեր ընկեր պ. Տ. Յ. «Մշակի» մատենագրու-
թեան բաժնում իրաւ էր նկատել, որ պ. Ահա-
րոնեանը երգում է Բայց մոայլ, սպաւոր, տխուր
են նրա քնարի ձայները: Եւ պ. Ահարոնեանի տա-
ղանդը հէնց նրանումն է, որ նա երգում է,
միայնով լէալիստ: Եթէ նրա յուզված մտքերը
սաւառնում են բարձր, բարձր, ձիւնով ծածկված
սարերի գագաթներին եւ կամ նոյն իսկ եր-
կինք, նրա ոտքերը հաստատ են հողի վրա
գրած: Նրա պատկերների վառ երեւակայու-
թեան արգասիք չեն, մտածածին չեն: Ձեր ա-
ռաջը անողոք իրականութիւն է, ձեր առաջ
ինքը կենանքն է նկարված իր հազար ու մէկ
դարձերով:

Եւ մանրակարները՝ «Հարեանները», «Աքա-
ղաղը», «Պուռ—ըմ կաթ», «Փշուր—ըմ խոյ»,
«Բաշուն» մեր աղքատ գրականութեան ամենա-
խոշոր գրողները պէտք է համարել:

Առանց արտասուքի, անվրդով, անտարբեր
«Պատկերները» կը կորցնայ միայն նա, որի
սիրտը արդէն մեռած, սառած է: Եթէ «Պատ-
կերները» մեր թիւրքահայատակ եղբայրակիցնե-
րի ամփոփ պատմութիւնն է, փորձենք երե-
ւակայել մեզ նրանց ողբ կենսքը իրեն մի օր:
Այդ փորձը ծանր է: Մենք կը տեսնենք, որ
կարծ եւ դառն է նրանց առաւ օտը, դար-
հուրիւ եւ անգութ նրանց ցերեկը եւ յու-
սակաւոր, անմիթթար նրանց երեկոն եւ
գիշերը...

Նրանց առաւօտը...

Մարտուն, Յովակը, ռէս Պէտուն, Ղարօն, բո-
լորը աշխատում են, արիւնով, քրտինքով պա-
րտադրանքով իրանց հողը: Ողորմած երկինքը
ժպտում է նրանց, բայց լեռներից քաղցած
չների պէս ցած են իջնում վայրենի քրդերը
եւ պահանջում են իրանց սովորական բաժի-
նը... Շէյխ Աւդին սերմացու է վերցնում, բէ-
գերը 50 ձիւններով ճիւղեր են գալիս: Հան-
գիստ կարելի չէ ուրախանալ, զուարճանալ,
ժպտալ: Անը միշտ տիրում է սրտերում:

Այնպէս չէ, դա երջանիկ առաւօտ չէ, դա
կարծ եւ դառն առաւօտ է: Մարտուն, Յովակը,
ռէս Պէտուն, Ղարօն, բոլորը բաւ հասկանում
են, որ «տուն», «արտ», «արուն» զըմմէն լէ
քրդուն ին, խալը բանըմ չունի... Հայե-
րի հարստութիւնը մի շէնք է աւազի վրա
կանգնած, վաղ թէ ուշ այդ շէնքը փուլ պիտի
գայ եւ իրան տակը թաղէ խելքերին: Քամին
կը փչէ եւ կը տանէ այդ շէնքը եւ այնպէս հե-
ռուտ հայի գիւղերը կը դառնան ամալի ա-
նապատ:

Այդ իսկ եղաւ լոյս ցերեկը...
Նրանց ցերեկը...

Հաղում են, ոռնում են չները... Հրաման
կայ թալանել անպաշտպան հայերին... Այր-
վում են հայի գիւղերը... Բոցը լուսաւորում է
քառանկի տեսարաններ... Սպանում են, հա-
րստահարում, չեն խնայում ոչ ծեր, ոչ կին...
օրորոցներ ձվակալող մանուկներով, օգի մէջ
սոսկալի պտոյտներ գործելով, ընկնում են
խրճիթների բոցերի մէջ... Յորենի հորերի բե-
րանները բանում են եւ քաշ են տալիս զէպի
հորերը կանանց եւ երեխաներին... զլորում են
իրար վրա հրացանների կոթիւններով... զոհերը,
մահվան սարսափից ալանդակված, աչքերը
լայն բացած, աղաւթում են, աւազակների ձեռ-
քերը համբուրում... իղուր... չտապ չտապ
հողը թափում են խելքերի վրա... հողի չերտը
հաստանում է եւ հաստանում... Իրողանի մե-
ռածները կրծոտում են իրար, ծանում, ոլոր-
վում են հողի եւ արեան շաղախի մէջ...

Օ՛ր, ինչպէս երկար է այդ զարհուրելի եւ
անգութ ցերեկը: Ինչո՞ւ չէ շտապում երեկոն
ինչո՞ւ չէ գալիս գիշերը իր թանձր, մութ քօղը
զցելու այն չարաբանքների եւ առաւապան-
ների վրա, որ նոյն չափով քրիստոնեաները
մինչեւ անգամ Ներոնի օրերով չը կրեցին...

Նրանց երեկոն եւ գիշերը...
Տխուր եւ ցուրտ օրեր... Քրդերի սրերից
փախչողները թողնում են տուն, արտ, պա-
պերի գերեզմանները: Անտուն, անտէր թա-
փառում են եւ մեռում... նրանց ցնցողները
կայել են նրանց վտիտ մարմիններին... նրանց
մէջ է եւ անուանի եւ հարուստ ռէս Պէտուն...
նա եւս մեռում է...

«Պուռ—ըմ կաթ», մահվան տագնապի մէջ
աղաւթում է մի անմիտ մանուկ...

«Պուռ—ըմ կաթ...» Կարծես խաչեցեալ Քրիս-
տոսը բարձր Գողգոթայից ասում է «Մարաւի-
եմ»...

«Փշուր—ըմ խոյ», բոլորում են որբերին...
Իսկ Մարտուն կամայ կամայ արնաքամ է լի-
նում... Յովակը վեր է կենում, առնում է նրան

«Գիշերական սարքը խէր է», որ այժմ լոյս է տեսնում երկրորդ, փոքր ինչ ուղղած տպագրութեամբ, ոչ ամենամեծն է, ոչ էլ ամենակատարեալը մեր ծերունազարդ գրամատուրգի գրուածքների մէջ, սակայն այդ փոքրիկ կատակերգութեան, այդ կէս վոզովիլի եւ կէս կոմէդիայի մէջ էլ ցոյց է տալիս իր ամբողջ փայլով նրա խոշոր տաղանդը:

Ասում են, ամենամանր գործը գեղարուեստի մէջ, գոնէ գեղարուեստական գրականութեան մէջ, գրամատիկական գրուածքն է: Եթէ նոյն իսկ վիճեցած այդ մտքի հետ, պէտք է համաձայնեցնել սակայն, որ թատերական զբնուածքը ներկայացնում է ինքնուրոյն մեծ գծաւորութիւններ: Դրամատուրգը մեզ պէտք է տայ բնաւորութիւններ իրանց ամբողջ հոգեբանական խորութեամբ, բարբեր իրանց ամբողջ տիպականութեամբ, բայց նա զրկված է միւս բոլոր գործիքների յատուկ իրաւունքից —ցուցմունքներ անել, բացատրութիւններ տալ, վկայել, փաստաբանել: Այդ բոլորը արգելված է դրամատուրգին, որ երբեք չի պէտք է բնաւ դուրս գալ, որ պէտք է միշտ կուլիսների յետեւ լինի եւ որ այնուամենայնիւ մեզ պէտք է տալ կենքի եւ մարդկանց պատկերներ այնպէս, ինչպէս ինքն է տեսնում, ինքն է գգում, ինքն է երեսակցում:

Պ. Սունդուկեանցին աջողում է այդ, որովհետեւ նա ունի դրամատուրգին անհրաժեշտ գլխաւոր ձիւղը—ինչը գործող անձինքների ամբողջ հոգին, ամբողջ սիրտը, ամբողջ աշխարհայեացքը մի խոսակցութեան, մի մենախոսութեան, երբեմն նոյն իսկ մի նախադասութեան մէջ, որ դրա շնորհիւ դառնում է ժողովրդական, ընդունվում է սովորական խոսակցութեան մէջ իբրեւ առած:

Ստացած, բերեղացած եւ բնորոշ ոճ պէտք է ունենայ դրամատուրգը, եւ ոճ կարող է աւելի, որ թիֆլիսի բարբառը ընդունակ է աւելի խաղաղման, քան մենք տեսնում ենք պ. Սունդուկեանցի գրուածքներում, եւ կամ թէ կարող է աւելի հիւթ, աւելի համ ու հոտ ունենալ, քան ունի մեր դրամատուրգի գործող անձինքների բերնում:

Նոյն արժանաւորութիւնները, որոնք աչքի են ընկնում մեր դրամատուրգի մեծ գրուածքներում, դիպուկ «Պէպո»-ում, կրկնում են: աչքի են ընկնում եւ «Գիշերական սարքը խէր է» փոքրիկ կատակերգութեան մէջ, որ միայն մի չը վճռված հարց է թողնում ուշադիր ընթերցողի կամ հանդիսատեսի մտքում,—ինչու պէտք է մանրամասն Օսկանի տանը պատրաստ լինեն սաղանդարները մի ամենասովորական բուսական:

Տ. Յ.

Նոր ստացված հրատարակութիւններ. 1) բժկ. Վահան Արծուրի. Բժշկի գրություններ. № 1. «Մի խմբ» 38 էր. գ. 5 կ. Թիֆլիս 1901 թ. 2) Նիկողայ Մուրա-տեան «Բնական պատմութիւն Արշակ երկրորդի եւ անոր Պապ որդւոյն», 198 էր. գ. 2 1/2 ֆրանկ. Ալեք-սանդրիա, 1900 թ. 3) Պատկանիւ. «Ճարտարապետութեան պատմութիւն» (Արձակ բանաստեղծութիւններ). 71 էր. գ. 10 կոպ. Ալեքսանդրապոլ, 1901 թ. 6) «Կանոնադիր որդաւորաց ընկերութեան հայոց ի Գահիրէ, 1901 թ. 7) Գ. Ա. Халатянц. «О некоторых географических названиях древней Армении в связи с данными вавилонских надписей». 8) Левон Месрианц. «Этюды по армянской диалектологии. ч. II. в. I. 186 стр. Москва, 1901 г. 9) В. Вартанянц. «Антропологическая философия. П. Миртовъ и субъективный методъ въ социологии». 38 стр. п. 25 коп. Тифлисъ, 1901 г. 10) Ахмед-бек Агаевъ. «Женщина по исламу и въ исламе». 59 стр. п. 30 к. Тифлисъ, 1901 г. 11) Султанъ—Меджид Ганиевъ. «Письма Шейда-бека Ширвани». вып. 2-й. «Женский Амулетъ». (Гялинзаръ Амажи) Թուրքերէն. 40 կ. Баку, 1901 г.

ՆԱԽԱԿ ԱՍՏԲԱՆԱՆԻՑ

Ապրիլի 6-ին

Չատիկ շաբաթը մեզանում սկսեց իր մի շարք ներկայացուցիչներ հայոց բեմի զարդ եւ Բազուրի հայոց թատրոնական խմբի տաղանդաւոր դերասանուհի տիկ. Սիրանոյշ:

Տիկնոջ գալը սիրով ողջունեցին տեղական թերթերը: Այդ մասին յայտնվեց հասարակութեանը առանձին յայտարարութիւններով, որոնք ձեռքից ձեռք տարածվեցին ամբողջ քաղաքում: Այդ բոլորից յետոյ հասարակութեան հասկացող մասը անհամբեր սպասում էր որ առաջ տեսնել տ. Սիրանոյշին եւ նրա խաղից ստանալ այն հոգեկան բաւականութիւնը, որից արդէն զուրկ էր հանգուցեալ հանճար Աղա-մանից յետոյ, որը երկու ամբողջ ամիսներ

զիւթեց, հիացրեց մեր հասարակութիւնը եւ շատերին էլ հայրենի բարբառը ուսանելու առիթ եղաւ:

Առաջին ներկայացումը նշանակված էր ամսիս չորսին. արվից «Մեղէն» ողբերգութիւնը: Չը նայելով, որ այդ մի եւ նոյն շաբաթը հայ ընկերական եւ հայուհեաց Բարեգործական ընկերութեան երկու թիւներն էին նշանակված, որոնց տոմսակիները բաժանված, ծախված էին, բայց եւ այնպէս, հասարակութիւնը շատ պիտի էր թատրոն գոհացուցիչ բազմութեամբ: Հինգ որ տ. Սիրանոյշ ըսելի վրա առաջին անգամ երեւաց, մի րոպէ Ժամանակաւորութիւն թիւղայրեց թատրոնը, որպիսի ընդունելութիւնը կարծես առիթ տուեց նրան մի անսպասելի եռանդով տանելու իր խաղը սկզբից մինչեւ վերջ:

Տիկնոջ խաղն այնքան կենդանի, զգացված եւ զօրեղ էր, որ հինգ սկզբից դառնաց հանդիսականներին, այնուհետեւ ծափահարութիւններին վերջ չը կար: Յատկապէս մեր բեմի համար «Մեղէն» արդէն հնացել է եւ թատրոնը ոչ մի կորուստ չէր ունենալ, եթէ այդ պիտեան բոլորովին ցանկից դուրս հանվէր, բայց տ. Սիրանոյշի ճոխ խաղի համար «Մեղէն» կարեւոր էր, որպէս զի նա կարողանար իր տաղանդի բոլոր բարեմասնութիւնները եւ իր խաղի նրբութիւնները ցոյց տալ: Եւ իսկապէս նա այնպիսի զարմանալի հմտութեամբ պատկերացրեց մայրական սիրոյ բարձր կեղեցիկները եւ կանայի վիճվորութեան կատաղի ընկրկումները, որ շատերը հանդիսականներից լսելու էին: Հինգ արանում էլ կայանում է արուեստագէտի բարձր արժանիքը, որ կարողանում է նմանօրինակ զգացմունքներ յարուստանել: Երանք, քաղաքած սրտեր յուզել եւ բեմի վրա գործող անձերի հետ հանդիսականներին հանկուտ, ապրել տալ:

Առ այժմ այսքան կասեմ, որ տ. Սիրանոյշի եւ իր խմբի առաջին խաղը անցաւ Աստրախանում շատ աջող եւ մայրենի բեմից զուրկ հայ օրինաւոր ներկայացուցիչների կարօտ մեր հասարակութեան մէջ զարթեցրեց կենդանի հետաքրքրութիւն եւ ոգեւորութիւն, այնպէս որ տ. Սիրանոյշի արտիստական ճանապարհորդութիւնը կարող է բարեբար հետեւանքներ թողնել Աստրախանում, եթէ միայն խումբը առաջին անգամի նման ոյժ գործ կը զնէ պահպանելու անսամբը:

Թատերասեր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, կիրակի, ապրիլի 15-ին, կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան մէջ կը կայանայ մի ժողով պարզելու, թէ ինչ ձեւով պէտք է կազմակերպեն մամուլի պալլիթին շինութիւնը կովկասեան ցուցահանդէսում: Այդ ժողովին կը մասնակցեն բայց մամուլի ներկայացուցիչներից կազմված յանձնաժողովի անդամները: Թիֆլիսի ապարանների, վիճակագրականների, գրավաճառանոցների եւ լուսանկարչական արհեստանոցների ներկայացուցիչները:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի այդ գործական զարդերում պէտք է շարունակվեն պատրաստվածքները հետեւեալ կարգով: Ամառվայ ընթացքում կը պարապվեն երրորդ եւ երկրորդ դասարանների աշակերտները, իսկ նոյն ընթացքից սկսած բոլոր դասարանները: Դպրոցի աշակերտների թիւը պէտք է սահմանվի յիստում:

Կոյրերին խնամող հոգաբարձութեան խորհուրդը խնդրում է մեզ յայտնել, որ մարտամար ընթացքում նա ունեցիլ է մուտք 2758 րուբլի 77 կ., իսկ ծախք 2893 ր. 32 կ.: Առ 1 մարտի խորհուրդը ունէր 12,572 ր. 47 կ. իսկ առ 1 ապրիլի 12,437 ր. 98 կոպէկ: Մարտամարին եղել են նոր հիւանդներ 615 անձ, որոնք հին հիւանդների հետ միասին արել են 5235 այց հիւանդանոցում:

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Պետերբուրգից: «Ապրիլի 9-ին այստեղ հասաւ ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դէլկասէ իր անձնական քարտուղար Միւլիլիէի հետ: Նրան դիմաւորելու համար կայարան էին եկել Պետերբուրգի ֆրանսիական դեսպան կոմս Մոնտէթլլո, ֆրանսիական դեսպանատան անդամները, զինուորական գործակալ գնդապետ Մուլին, ռուսաց արտաքին գործերի եւ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնների ներկայացուցիչները: Երբ Դէլկասէ դուրս էր գալիս վազօնից, հաւաքված հասարակութիւնը ողջունեց նրան «Կեցցէ ֆրանսիան» աղաղակներով:

Մի քանի լրագրիչների մէջ երեւցած տեղեկութիւնները այն մասին, թէ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մտադրութիւն ունի լուրջ փոփոխութիւնների ենթարկել կանանց բարձրագոյն դպրոցները, Պետերբուրգի լրագրիչների տեղով դուրս են որ եւ է հիմա: Այդ հարցը ոչ թէ միայն ներթափանցէ դարձել, այլ եւ չէ էլ բարձրացրած:

Այսօր, կիրակի, ապրիլի 15-ին, երիտասարդ դերասան Գալֆայանի մասնակցութեամբ, Արտիստական ընկերութեան թատրոնի դահլիճում, պէտք է կրկնվի Շէքսպիրի «Համլէտ» ողբերգութեան ներկայացումը:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը 10,100 րուբլի վարձատրութիւն է նշանակել այն հեղինակներին, որոնք այս տարվայ ընթացքում կը կազմեն լաւ եւ նպատակաւոր մարմար ձեռնարկներ ու դասագրքեր տնտեսական ուսումնարանների համար:

ԿԱՂՁՈՒԱՆՈՑ մեզ գրում են. «Ապրիլի 10-ի երեկոյեան. Վեհափառի կազդուան մտած օրը, գեղեցիկ հրաշալիութիւն կար պ. Մուրուզեանի աման: Ժողովուրդը հաւաքված Վեհափառի ընտանիքի շուրջը՝ թնդացնում էր օրը երգերով ու կեցցէներով: Նոյն երեկոյեան Վեհափառը ներս հրաւիրեց քաղաքացիներից շատերին եւ նրանց հետ խոսակցութիւն սկսեց զանազան կենսական հարցերի մասին, ի միջի այլոց եւ քանանների մասին, որտեղ դարձեալ նոյն կարծիքները յայտնեց, ինչ որ յայտնված էր Արչէն Երէցի քարոզի մէջ: Յոգնածութեան պատճառով Վեհափառը չը կարողացաւ երկար խօսել եւ հետագայ իր առանձնասենեակը, իսկ ժողովուրդը գոն եւ ուրախ հեռացաւ: Հետեւեալ առաւօտը կրկին նոյն տանական հանգիստ ու տեսարանն էր ներկայացնում պ. Մուրուզեանի տունը: Ժողովուրդը վաղ առաւօտից սկսած հաւաքվում էր տան չորս կողմը եւ պարտէզը, որը պարսնի օրվայ առիթով բացել էր հասարակութեան համար: Ներկայացան Վեհափառին զբերանտան գնդը եւ սահմանադատ զորքերը: հրամանատարները, ռուսաց դպրոցի ուսուցչական խումբը, թիւրք հոգեւորականութեան ներկայացուցիչը եւ ժողովրդից զանազան խմբեր: Երեկոյեան հաւաքելով ժողովրդի առաջնակարգ դասը, Վեհափառը խօսք բաց արեց եկեղեցու շինութեան մասին եւ կամեցաւ թէ ժողովրդի եւ թէ պ. Զանփողազեանի կարծիքն իմանալ այդ հարցի մասին: Հասարակութիւնն արդէն իր նախապատրաստական ժողովներում ընտրել էր իր կողմից Վեհափառի հետ խօսելու համար բժ. Կաճախեանին եւ պ. Մուրուզեանին: Երկու կողմն էլ կամենալով յարգած լինել Վեհափառի կամքը, յայտնեցին, որ իրանք պատրաստ են վարվել, ինչպէս կը հրամայէ Նորին Սրբութիւնը: Վեհափառը երկու կողմի կարծիքներն էլ լսելով՝ հեռացաւ ժողովից եւ ժողովականները ցրվեցին սպասողական դրութեան մէջ: Հետեւեալ առաւօտ, ապրիլի 12-ին, Հայրապետը երկին հաւաքեց հասարակութիւնը՝ իր վճիռը յայտնելու համար: Մոռացանք ասել, որ նախօրը երեկոյեան (11-ին) Վեհափառը բարեհաճեց դուրս գալ տանից եւ այցելել նորակառոյց եկեղեցին: Ժողովուրդն անհամբեր սպասում էր դահլիճում եւ պարտէզում, թէ ինչ կը յայտնէ Վեհափառը եկեղեցու շինութեան մասին: Ժողովրդի պատգամաւորները եւ պ. Զանփողազեան Վեհափառի առանձնասենեակում երկար խորհրդակցելուց յետոյ դուրս եկան նրա հետ դահլիճ եւ ապա պատշգամբը, ու հաւաքված ժողովրդին Վեհափառը աւետեց հաշտութեան մասին եւ յայտնեց, որ եկեղեցու շինութիւնը յանձնում է պ. Զանփողազեանին եւ որ գործի վրա կը հսկեն Կարսի յանրապետ, պ. Զանփողազեան կամ նրա նշանակած մարդը եւ հասարակութեան կողմից նշանակած մի քանի անձնաւորութիւններ: Այնպէս որպիսիք հրաւիրած վարպետ Մանուկի հետ միասին Երեկոյեան պատրաստվում է կրկին հրավառութիւն, փողոցները դարձեալ զարդարված են: Վեհափառը ուղեւորվելու է դէպի Կարս, ուր արդէն պատրաստութիւններ են տեսնում Վեհափառին արժանապալի ընդունելու մասին:

Մի քանի լրագրիչների մէջ երեւցած տեղեկութիւնները այն մասին, թէ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը մտադրութիւն ունի լուրջ փոփոխութիւնների ենթարկել կանանց բարձրագոյն դպրոցները, Պետերբուրգի լրագրիչների տեղով դուրս են որ եւ է հիմա: Այդ հարցը ոչ թէ միայն ներթափանցէ դարձել, այլ եւ չէ էլ բարձրացրած:

ԱՅՈՒՆԻՍՏԻՑ մեզ գրում են. «Եղանակները մեզնում տաք են եւ պարզ: Վաղուց է որ մեզանում անձրեւ չէ եղել: Ծնորդի եղանակների բարեխառնութեան այս տարի մեզանում բուսականութիւնը չը տեսնված առատութիւն է խոտաւում: Մանաւանդ ծառապտուղները,

որոնք վաղուց է ծաղկել են, չափից դուրս առատ են եւ լաւ: Եթէ բնութեան պատահաներից զերծ մնան, յոյս ունենք, որ այս տարի մեզանում մրգերի անսահման առատութիւն կը լինի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Դէկասէի ուղեւորութեանը դէպի Պետերբուրգ զանազանական լրագրութիւններն ապա Ֆրանսիական մամուլի մէջ: Արտաքին գործերի մինիստրութեան մէջ կատարվող այդ գերին քաջ տեղակալ «Matin» լրագիրը յայտնում է, թէ մինիստրի ճանապարհորդութիւն տեղի է ունեցել ոչ միայն Դէկասէի ցանկութեամբ բանակցելու կոմս Լամզորօֆի հետ զանազան միջազգային հարցերի մասին, այլ եւ ռուսական կառավարութեան անմիջական հրաւերով, որին եւ պատկանում է այդ տեսակցութեան նախաձեռնութիւնը: Երկրպագործութեան մինիստր Դիւպլիէի լրագիրը—«Petit Parisien»—յայտնում է, թէ Դէկասէի ուղեւորութիւնը մի փայլուն ապացոյց է ֆրանս-ռուսական դաշնակցութեան արտաքին Լրագիրը շարունակում է: «Տեսակցութիւնը Դէկասէի եւ կոմս Լամզորօֆի մէջ հիմք կը նախապատրաստէ երկու պետութիւնների միաբան գործողութիւնների համար հեռաւոր Արեւելքում ուղի հերթական են դարձել չափազանց նշանակաւոր հարցեր, որոնք սակայն մնում են դեռ եւս չլուծված, որովհետեւ կարող են այնտեղ զեռն վերականգնված եւ պետութիւնները գծաւորութիւնների են հանդիպում միմեանց հետ համաձայնելու գործի մէջ: Կարող է պատահել, որ երկու մինիստրների խորհրդակցութեան ժամանակ քննութեան ենթարկվի նաեւ Միջերկրական ծովում միջազգային հասարակութեան պայմանների հարցը, ի նկատի ունենալով այն նշանաւոր անցքերը, որոնք կարող են տեղի ունենալ ծովի ապագայում եւ որոնք կը պահանջեն բոլոր եւրոպական պետութիւններից միաբան գործողութիւններ: Այս կողմի խաղաղական նաւատորմի այցելութիւնը դէպ Տուլոն մի բարի նշան է»:

—«Երիտասարդ չէխերի կուսակցութեան վերջին ժամանակ ընտան խաղաղաբար ընթացքը,—ասում է «НОВОСТЕ» լրագիրը,—սկսում է արտադրել տար: Փրանց Թովկէի կայսրը 2 միլիոն զուլէն նուիրեց յօդուտ չէխական ազգային թանգարանի Պրագայում: Այս նուէրը չէխական ժողովրդի վրա, որ երբեք չէ վաղիկ աւստրիական միապետների եւ կառավարութեան բարեհաճ ուշադրութիւնը, ահապէս արգելաւորութիւն գործեց: Այստեղ նշանաւոր է այն, որ նուիրվում է մի դրամական նշանաւոր դրամար, այլ այն, որ նա նուիրվում է չէխական ազգին, որ ճանաչվում եւ ընդունվում է չէխական ժողովրդի կողմից: Ինքնուրոյն գոյութեան իրաւունքը: Մինչեւ այժմ չէխեր ստիպված էին բաւականապէս իրանց անձնական ոյժերով եւ իրանց հաշուով չէխերին իրանց համար թատրոն, գրադարան, համալսարան եւ այլն: Աւստրիական պետական գանձարանից օժանդակութիւն ստանալու էին միմիայն զբոսականները, որոնք ապրում էին չէխական թաղաւորութեան մէջ: Այժմ մի քայլ է արվում ուրիշ ուղղութեամբ եւ շատ հասկանալի է, որ չէխական ժողովուրդը ուրախանում է այդ քայլի վրա: Բացի այս նուէրից Փրանց-Թովկէի կայսրը ուշադրութեան արժանացրեց չէխերին պարսիկ անդամ չէխ երաժշտագէտ Դիօթակին, չէխ բանաստեղծ Վերվիլկոն եւ չէխ պրոֆէսոր Ֆրիդային: Երեքն էլ պատկանում են չէխական ազգի բնակիչ ներկայացուցիչների թւին, իսկ առաջին երկուսը ընդհանուր եւրոպական անուն են վայելում: Սակայն ուղի, որ կայսրի այս բոլոր նորաները զարացրին աւստրիական գերմանացիներին: Երբեք չէին թաղանթում իրանց զարթոյթն եւ զընդունելութիւնը, որոնք վերջին ժամանակ աւելի եւ աւելի սաստկանում են աւստրիական գահաժառանգի, Էրցհերցոգ Ֆրանց-Ֆերդինանդի արտասանած յայտնի ճառի ազդեցութեան տակ:

—Սօֆիայում նորերումս լոյս տեսաւ մականդոնական համաժողովի նախագահ պրոֆէսոր Միլայովիչի ըրօշուրը: Պատկաւ ըրօշուրը պարսկական մինիստրութեան վերջին կարգադրութիւնների մասին, որոնք ուղղված էին մականդոնական շարժման պարագլուխների դէմ, պրոֆէսոր Միլայովիչի, ի միջի այլոց, ասում է. «Այժմ ոյժ չէ կարող յետ կանգնեցնել մականդոնական շարժումը, եւ այն միջոցները, որ ձեռնարկել է Բոլշարիայի կառավարութիւնը մականդոնական կոմիտէից տապալելու համար, առաջ կը բերին եղբայրասպան պատերազմ»:

ԻՍԱՌԵՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Ր Ա Ն Կ Ա Ր

Վերջապէս Էջմիածնումս եմ: Իմ ընթերցողը անշուշտ սպասում է ինձից մի շարք նկարագրութիւններ: Բայց արդեօք եւ կարող կը լինեմ գոհացնել նրա հետաքրքրութիւնը: Գուցէ եւ ոչ:

